



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

230], ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

07.03.2012

**Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն ՈՒ Ղ Ե Ր Ձ**

**Կ Ա Ն Ա Ն Ց Տ Ո Ն Ի Կ Ա Պ Ա Կ Յ ՈՒ Թ Յ Ա Մ Բ**

Ձերմտրեն շնորհավորում եմ Կանանց տոնի առիթով և մաղթում, որ Ձեր առօրյայի անբաժան ուղեկիցները լինեն առողջությունը, կանացի երջանկությունն ու բերկրանքը:


Բարեմաղթում եմ, որ գարնան գարիճնքն ազդարարող այս օրվա խորհուրդը և ողջ տոնականությունը նպաստեն Ձեր ուրախ տրամադրությանն ու այդ տրամադրությունը տարածվի նաև հաջորդող օրերի վրա:

Մարտի ութը բոլոր ժամանակներում համարվել ու համարվում է կնոջ բացառիկ դերի, էության ու նկարագրի ուրույն դրսևորումները գնահատելու և նրան արժանիորեն մեծարելու մի նշանակալի առիթ:

Այսօր ևս պետք է ընդգծենք կանանց առանցքային ներկայությունն ամենատարբեր ոլորտներում և փաստենք, որ այդ կարևորագույն ներկայությունը բացառապես նպաստում է հասարակական կյանքում իրականացվող տարաբնույթ գործընթացների արդյունավետ կազմակերպմանը:

Այս ինքնատիպ տոնի կապակցությամբ դարձյալ ամենաջերմ մաղթանքներ եմ հղում բոլոր կանանց և ցանկանում, որ Ձեր բոլոր օրերը նշանավորվեն բարության, սիրտ և խաղաղության զգացողություններով՝ իրականություն դարձնելով կանացի բոլոր նպատակները, երազանքներն ու նախաձեռնությունները:

*Հարգանքներով*

 Կ. ԾԱՀԳԱԼԴՅԱՆ